

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

C. 1930/1392

Կ. Ս. ԱՅԿՈՒՄԱՆ - Ս. ԱՆԿՐԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ճ Ո Ւ Ր Ջ Ը

Վերահպանեց Ա. Գ—ն.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Иностранная Наука
СССР

Խմբագրեց Ա. ԳՐԳՈՅԱՆ

342.8
Բ-39

ՌՈՍՏՈՎԻ ԴՈՆԻ ՎՐԱ
1928

01730/1392
01 MAR 2010

U
Ca 1697

Կ. Ս. ՌԱՌԻՄԱՆ - Օ. ԱՆԴՐԵՅՎ

342.8
P-39

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ճ Ո Ւ Ր Զ Ը

Վերակազմեց Ա. Դ—ն.

Խմբագրեց Մ. ԳԻԳՈՅԱՆ

ВНЕШНЯЯ
ИНСТИТУТА
ВООРУЖЕНИЯ
Ленинградский Науч
СССР

ՌՈՍՏՈՎ ԴՈՆԻ ՎՐԱ
1928

0 1 MAR 2013

35.623

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎԵՐՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Անցավ հեղափոխության տասնութ տարին:

Տասնութ տարի յի, վոր պրոլետարիատը գլուղացության հետ միասին պահում է իշխանությունն իր ձեռքին:

Տարի ցտարի ավելի յե ծավալվում բանվորների, գյուղացիների ու կարմիր բանակայինների պտտգամավորների խորհրդների աշխատանքը, ավելի լայնանում սոցիալիստական շինարարությունը:

1917 թվի Հոկտեմբերին, դուրս քշելով կալվածատերերին և բուրժուաներին, պրոլետարիատն իշխանությունը վերցրեց իր ձեռքը, հայտարարեց իր դիկտատուրան, վորպեսզի մեր յերկիրը դարձնի սոցիալիստական յերկիր: Յե՛վ պրոլետարիատի դիկտատուրան իրագործվում է խորհրդների միջոցով, կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) ղեկավարութամբ:

Խորհրդները պրոլետարիատի դիկտատուրայի (իշխանության) ձեռն են: Խորհրդների միջոցով բանվոր դասակարգը իրագործում է յերկրի ղեկավարությունը, նրանց միջոցով նա կյանքի մեջ է անցկացնում իր ծրագիրը: Բանվոր դասակարգի ծրագիրը—գա այդ դասակարգի առաջավոր, ամենագիտակից վաշտի,—կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) ծրագիրն է: Չկա և չի յիլ կարող լինել ուրիշ մի քաղաքական ծրագիր, վորը բնորոշեր խորհրդների աշխատանքը, ինչպես նաև չկա և չի յեղ կարող լինել ուրիշ բանվորական կուսակցություն, բացի կոմունիստական կուսակցությունից:



61093-67

Խլելով կալվածատերերից հողերը, բուրժուաներից— նրանց ֆարրիկներն ու գործարանները, բանվորական պետութիւնը հենց դրանով տրամատախիլ արեց ուրիշ քաղաքական կուսակցութիւնների գոյութիւնը: Արեւմտեքում, վորտեղ իշխանութիւնը դեռ եւս կապիտալիստների ձեռքին է, կան շատ քաղաքական կուսակցութիւններ: Բայց այդ կուսակցութիւնների նպատակը կայանում է մի բանում. ներքա՛ք— թե լիբերալները, թե կոնսերվատորները, թե սոցիալ-դեմոկրատներն աշխատում են, թե ինչպես լավ խաբեն ժողովրդական մասսաներին, վորպեսզի ամբացնեն բուրժուաների իշխանութիւնը: Մասնավորապես սոցիալ դեմոկրատների (մեր մենշեիկները) կուսակցութիւնը, կապիտալիստ ծառայողները, նպատակ ունի բանվորական մասսաներին խաբելու: Նույնպես էլ այսպես կոչված գյուղացիական կուսակցութիւնները (ինչպես մեր ես-երները) նպատակ ունեն գյուղացիական մասսաներին խաբելու, վորպեսզի բուրժուաներն ու կալվածատերերը (ПОМЕЩАКИ) կարողանան նրանց սանձըն իրենց ձեռքին պահել: Կոմունիստական կուսակցութիւններն աշխարհիս յերեսին միակ կուսակցութիւններն են, վորոնք մերկացնում, բաց են անում ամեն մի խաբերայութիւնն ու սուտը ե պարզ կերպով ճշմարտութիւնն ասում բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացութեան: Կոմունիստների ճշմարտութիւնը կայանում է նրանում, վոր միմիայն կապիտալիզմի վրա տարած կատարյալ հաղթութիւնը, արտագրողական գործիքների (ֆարրիկների, գործարանների, հողի) վրայից մասնավոր սեփականութեան վոչընչացումը և սոցիալիստական հասարակութիւն կազմելը կը վերկեն աշխատավոր մասսաներին ամեն տեսակ շահագործումից: Մեր աշխարհի առաջին թորհ. Սոցիալ. Միութեան սահմանադրութեան մեջ ասված են հետեյալ իմաստուն խոսքերը.— «Վոչնչացնել մարդու կողմից մարդուն շահագործելը»:

Յեթե խորհրդները դադարեցին իրագործել կոմունիստ-

տական կուսակցութեան (բոլշեիկները) ծրագիրը և գնային,— ինչպես այդ յեղով փետրվարյան հեղափոխութեան ժամանակ,— ես-երների և մենշեիկների յետեից, այն ժամանակ նրանք կդառնային կապիտալիստական և իրենց ձեռքով կփորհային իրենց գերեզմանը: Այդպես յեղով Գիբսոնիստում, վորտեղ 1918 թվի վերջին՝ միապետութեան դեմ տարված հեղափոխական կովում առաջ յեկած խորհրդները գնացին սոցիալ դեմոկրատների յետեից և իրենք իրենց վոչնչացրին:

Ամեն մի գիտակից բանվորին և գյուղացուն այժմ, Հոկտեմբերյան հաղթանակից 11 տարի անց, պարզ է, վոր միմիայն կոմունիստական կուսակցութիւնը պիտի ղեկավարի խորհրդները, վոր միմիայն նրա ծրագիրը խորհրդները պետք է անցկացնեն կյանքի մեջ: Ուրիշ կերպ մենք չենք հասնի Հոկտեմբերյան հեղափոխութեան վերջնական հաղթանակին, ուրիշ կերպ մեր յերկիրը սոցիալիստական չի դառնա, այլ յետ կ'ըզվի դեպի կապիտալիզմ:

Խորհրդների վերընտրութիւնները սրբին ամեն մի գիտակից գյուղացի պե՛տ է բարձր պահի կոմունիստական կուսակցութեան գրեզակը, համախմբելով այդ գրողակի շուրջը վորքան կարելի յե լայն գյուղացիական մասսաներ:

Յերբեմն լսվում են այսպիսի խոսակցութիւններ.— «Բանից դուրս է գալիս, վոր խորհրդները պրոլետարիատի իշխանութեան, նրա ղեկատուութեան օրգաններն են, ապա ու՛ր մնաց գյուղացութիւնը: Միթե՞ գյուղացութիւնն իշխանութեանը չի մասնակցում»:

Հենինը միշտ ասում էր, վոր մեր պետութիւնը բանվորական պետութիւն է և միեւնույն ժամանակ նա ասում էր, վոր մեր իշխանութիւնը բանվոր գյուղացիական իշխանութիւն է: Այո՛, մեր պետութիւնը բանվորական է, վորովհետև պրոլետարիատն է կանգնած իշխանութեան գլուխը, նա յի ղեկավարում պետական շինարարութիւնը, նա յի իրագործում յերկար տարիները ընթացքում կռած կոված

կոմունիստական կուսակցութեան ծրագիրը: Բայց այդ բոլորովին չի նշանակում, վոր աշխատավոր գյուղացուները չի մասնակցում իշխանութեան: Յեթե վերցնեք գյուղական խորհրդները, պրոլետարական դիկտատուրայի այդ ներքևի որգանները, կտեսնեք, վոր նրանց գերակշռող մեծամասնութիւնը բաղկացած է գյուղացիներից: Հեղափոխութիւնից հետո ամեն տարի քանի գնում, ավելի և ավելի գյուղացիներ են առաջ քաշվում աշխատանքի համար գավառական շրջանային, նահանգական խորհրդներում և պետական իշխանութեան կենտրոնական որգաններում:—Վնտրոնական Գործադիր կոմիտեյում և այլն: Գյուղացուներն անմիջական մասնակցութիւն ունի իշխանութեան մէջ, ամբողջ յերկրի պետական շինարարութիւնը ղեկավարելու գործում: Բայց, մասնակցելով իշխանութեան, նա չի առաջադրում իր առանձին ծրագիրը, բանվոր դասակարգի, կոմունիստական կուսակցութեան ծրագրից տարբեր ծրագիր: Չբավոր և միջակ: Գյուղացուները պրոլետարիատի դաշնակիցն է և մասնակցում է խորհրդներում, պետական իշխանութեան բոլոր որգաններում, բանվոր դասակարգի և նրա կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ:

Յեթե գյուղացուները գնար բանվոր դասակարգի դեմ, նրա ղեկավարութեան դեմ, նա վերջ ի վերջո կընկներ կալվածատերերի ու կապիտալիստների լծի տակ, կամ ինչպէս ասում են՝ «կտրած տաշտի» առաջ կկանգնէր: Մեր առածը գյուղացիների համար պարզ է բոլոր հեղափոխութիւնների պատմութիւնից: 1905 թվին գյուղացուներն իր ոգնութիւնն ուշացրից պրոլետարիատին: Պրոլետարիատը հաղթված դուրս յեկավ: Գյուղացուներն իր վզի վրա զգաց ցարական կառավարութեան կողմից հեղափոխութեանը հարվածելու ամբողջ ծանրութիւնը: Պատժիչ զորախմբեր և կալվածատերերի ուժեղացրած ճնշում:—ահա թէ ինչ վիճակվեց գյուղացուն հեղափոխութեան անկումից հետո: Իսկ 1914

թվի համաշխարհային պատերազմը, կապիտալիստների ու կալվածատերերի այդ վոճրագործութիւնն ինչքան արցունք ու չարչարանք պատճառեց ժողովրդական մասսաներին: Ապա 1917 թվի փետրվարյան հեղափոխութեանը: Մի՞թե գյուղացին այդ ժամանակ պարզ չհասկացավ, վոր ես երևից ու մենշեիկներից նա վոչ հող, վոչ էլ ազատութիւն կստանա: Ապա քաղաքացիական կոմիտեի ժամանակ՝ Դենիկինի, կոչակի և այլ սպիտակ գեներալների ամեն մի հաղթանակը գյուղացիների վզին նորից և նորից դնում էր կալվածատերերի և բուրժուաների ծանր լուծը:

Մինք այս բոլորը հիշեցինք նրա համար, վորպեսզի պարզ ցույց տանք, վոր գյուղացուներն առանց պրոլետարիատի հետ դաշն կապելու, առանց նրա ղեկավարութեան չի կարող իր շահերը պաշտպանել: Մեր հեղափոխութեան ու խորհրդային իշխանութեան հ/մնական ուժն ու ամբողջութիւնը կայանում է բանվոր դասակարգի յեվ գյուղացիական աշխատավոր մասսաների հետց այդ միութեան մեջ: Այդ բանը մեզ սովորեցրել է Լենինը, այդ բանը մեզ սովորեցնում է և կոմունիստական կուսակցութիւնը: Պրոլետարիատն ամենաառաջավոր, ամենահեղափոխական և հետևողական դասակարգն է, վորովհետև նա կորոնելու վոչինչ չունի, բացի իր շղթաներից, վորովհետև նա միացյալ ուժերով աշխատում է խոշոր հիմնարկութիւնների մէջ, նա կազմակերպված է և անցել է յերկար տարիների կովի բովից, կապիտալիստների դեմ կովելիս: Յերկար դարերի ընթացքում քանի քանի գյուղացիական ապստամբութիւններ են յեղել կալվածատերերի դեմ, բայց նրանք բոլորն էլ վերջացել են դաժան պարտութեամբ, վորովհետև գյուղացուները բաժան-բաժան է, նըրան դժվար է կազմակերպվել և ամբողջ յերկրում միացած գործել:

Ռուսաստանում էլ այդպէս է յիղել: Արյունով ու արձիճով վոտնատակ է արել ցարական կառավարութիւնը Ստեպան

Ռագինի և Յեմելյան Պուզաչևի հայտնի գյուղացիական ապստամբությունները:

Միայն այն ժամանակ, յերբ թագավորի, կալվածատերերի և բուրժուազիայի դեմ բարձրացած հեղափոխական շարժման գլուխն անցավ բանվոր դասակարգը, գործարանի բանվորը, աշխատավոր մասսաներն առաջին անգամ մարդկային պատմության մեջ հաղթեցին: Յեթն գյուղացու-թյունը բանվոր դասակարգի հետ չմիանար, դուրս գար նրա ղեկավարության տակից, այն ժամանակ նա կորցնե՞ր Հոկտեմբերյան հեղափոխության բոլոր նվաճումները—հողը և ազատությունը: Գյուղացու-թյան միլիտանավոր մասսաները նորից կընկնեյին կալվածատերերի, կապիտալիստների և կուլակների բռունցքի տակ: Միմիայն կուլակներն ու նեպմաններն են, վոր հայտնի կամ գաղտնի կերպով գրգռում են գյուղացիներին բանվորների դեմ, թշնամություն են ցանում աշխատավորների մեջ:

Խորհրդների վերընտրությունները ընթացքում ամեն մի բանվոր, ամեն մի գիտակից գյուղացի պե՞տ է ամբացնի գյուղացիական մասսաների միությունը բանվոր դասակարգի հետ: Միմիայն խտհրդներն են, վոր ամբացնում են բանվոր դասակարգի յե՛վ չե՛ավոր ու միջակ գյուղացի մասսաների կապը: Խորհրդներն այն գործիքն են, վորի միջոցով պրոլետարիատը և նրա կուսակցությունը ղեկավարում են գյուղացիական միլիտանավոր մասսաներին:

Մեր սահմանադրությունը գրկում է խորհրդների ընտրությունների իրավունքից այն բոլորին, վորոնք շահագործում են ուրիշի աշխատանքը: Ընդհանրապես, ընտրողական իրավունքից զրկվածների թիվը մեծ չէ (1926 27 թվին ՌՍՖՍՀ ձայնից զրկվել էյին 3,5 տոկ): Հիմա ևս պետք է ուղի-ուղով հետևել, վորպեսզի ընտրողական իրավունք չըտրվի կուլակներին, տերտերներին, նախկին վոստիկաններին և այլն: Հայտնի բան է, վոր ձայնից զրկված կուլակ-

ները և նրանց արբանյակները թշնամական ագիտացիա չեն տանում խորհրդային իշխանության դեմ: Նրանք սսում են, վոր բոլոր քաղաքացիք պետք է հավասար լինեն, կարծես ճնշողների և ճնշվողների միջև կարող է հավասարություն լինել: Մեր որենքները տարբերվում են հարուստների և շահագործողների շահերը պաշտպանող կապիտալիստական պետությունների որենքներից նրանով, վոր մեր խորհրդային որենքները բոլոր չբավորների, ճնշվածների և շահագործվողների շահերն են պաշտպանում: Զույգ-ըզ շահագործողներին ընտրողական իրավունքներից, խորհրդները միաժամանակ այն գործիքն են, վորի միջոցով բոլոր աշխատավորները մասնակցում են յերկիրը կառավարելու գործում: Խորհրդների վերընտրությունները խոշոր քաղաքական կարևորություն ունեն, վորովհետև ընտրությունների ժամանակ տասնյակ միլիտանավոր աշխատավորներ քընտրության են առնում Խորհրդային իշխանության ամբողջ աշխատանքը, նրա ներքին և միջազգային քաղաքականությունը: Բուրժուական յերկրներում նրանց պետական որգաններ (պարլամենտի ընտրությունները դատնում են այս կամ այն թեկնածուին ձայն տալու հասարակ ձևականություն: Այդ «ընտրյալները» հետո ժողովուրդ են ներկայացնում, հայտնի ու գաղտնի կերպով դավաճանում նրա շահերին, ծախվում են կապիտալիստներին թե սրտով, թե խղճով:

Ընտրությունների ժամանակ այդ պատգամավորները հազար ու մի կեղծ խոստումներ են տալիս, վոր ավելորդ ձայն ստանան, իրենց ընտրողներին խաբեն: Մեզ մոտ այդպես չի: Մեզ մոտ բանվորներն ու գյուղացիներն իրենց Խորհրդային իշխանության քաղաքականությունը քննադատում են ամեն կողմից, գնահատում իրենց ընտրած որգանների աշխատանքը: Ամեն մի ընտրողական ժողով իրավունք ունի ժամանակից առաջ յետ կանչել իր ընտրած պատգա-

մալորին, յեթի նա չի անցկացնում իրեն ընտրողների նա-
կազները: Խորհրդային իշխանութիւնը, այսինքն պրոլետա-
րիատի ղեկատարան, ամենախսկական ժողովրդապետու-
թիւնն է: Խորհրդները հսկայական մի դպրոց են, ուր ամեն
մի աշխատավոր սովորում է, թե ինչպէս պիտի կառավա-
րել յերկիրը: Լինինը մի անգամ ասել է, վոր ամեն մի խո-
հարարունի պետք է սովորի կառավարել յերկիրը: Հեղափո-
խութեան այս 11 տարվա ընթացքում քանի՞ բանվոր ու
գյուղացի ինչ առաջ քաշվիլ պետութիւնը կառավարելու գոր-
ծին, քանի՞ աշխատավորներ խկապես սովորել են յերկիրը
կառավարել:

Ահա թե ինչ է ասվում մեր կոմունիստական ծրագ-
րում՝

1. «Պարտադիր կերպով խորհրդի ամեն մի անդամին
գրավել յերկիրը կառավարելու գործում վորոշ աշխատանք
կատարելու:

2. Հաջորդաբար փոխել այդ աշխատանքները, այնպէս,
վոր նրանք աստիճանաբար ընդգրկեն վարչութեան բոլոր
ճյուղերը:

3. Ասիւնանաբար ամբողջ աշխատավոր բնակչութեանը
աշխատանքի գրավել պետութեան կառավարելու գործում»:

Այսպէս առաջ գնալով, մենք միաժամանակ կձուլենք
խորհրդային ապարատն աշխատավոր բնակչութեան հետ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻԾԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե:
ԶԱՐԳԱՑՆԵՆՔ ԵԼԵԿՏՐՈՑԻԿԱՑԻԱՆ, ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՈՒ
ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՑԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒ-
ԹՅՈՒՆ:

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ:

ՍՈՒԱՋ, ԴԵՊԻ ԽՈՇՈՐ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:
ՀԱՂԹԵՆՔ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՏԱ-
ՄՆԱՑՈՒԹՅԱՆ:

Մեր յերկրի բանվորներն ու աշխատավոր գյուղացի-
ները կոմունիստական կուսակցութեան (բոլշեիկների) ղեկա-
վարութեամբ սոցիալիզմ են կառուցում: Հետեապէս մեր
պետական և կոոպերատիվ որդանների գործնական աշխա-
տանքներն այնպէս պետք է կատարվեն, վորպէսզի ինչ-
քան կարելի յի շուտ զարգանան սոցիալիստական ծիւիւրը և
վոչնչանան կապիտալիզմի մնացորդները:

Կապիտալիզմի մեջքը մեր յերկրում կտորվել է: Գոր-
ծարանները, յերկաթուղիները, բանկերը, հողը պատկանում
են բանվորակտն պետութեան: Հաստատված է արտաքին
առևտրի մենաշնորհ: Այս բոլորը մեր պետութեան հնարա-
վորութիւնն է տալիս յերկրի տնտեսութեանը զարգացնել
սոցիալիստական ճանապարհով: Բայց այս զեռ չի նշանա-
կում, վոր մեր յերկրում սոցիալիզմի և կապիտալիզմի միջև

վոչ մի կռիվ չէա: Կապիտալիզմի արմատները մեր լիբերալ-դեմոկրատիայի հիմքերը են: Միջակայքում կապիտալիզմը մնացել է մանր տնտեսությունների մեջ — գյուղացիների և արհեստավորների տնտեսությունների մեջ, վորոնք ապրանք են արտադրում շուկայի համար: Որինակ՝ գյուղում մի գյուղացի հարստանում է, մյուսը աղքատանում, մեկի գործիքները շատ են, մյուսինը՝ քիչ: Շատ անգամ չքավորը տնտեսապես ընկնում է հարստի ազդեցություն տակ. նա կամ աշխատում է նրա տված պարտքի փոխան, ժամանակով վերցրած ձիու կամ գութանի համար, կամ ուղղակի հարստի մոտ աշխատում է վորպես բատրակ և այլն: Այդպիսով հարուստն սկսում է շահագործել ուրիշի աշխատանքը: Գյուղացի հարուստը, շրջապատված լինելով չքավորներով, կամաց-կամաց գտնում է վաշխառու կուլակ ու սկսում է ծծել ուրիշի արյունը: Նույնն էլ պատահում է արհեստավորների հետ. — մասնավոր վաճառականը կամ հենց նույն կուլակն առնում է արհեստավորների պատրաստած ապրանքը, վճարում է կուլակները ու վաստակում ուրիշներ:

Կարող են հարց տալ. ապա ինչ է անում Սորհրդային իշխանությունը: Բանն այնքան էլ հեշտ չէ: Միմիայն որինքներով և վարչական հրամանով կապիտալիստական չարիքը չի կարելի վոչնչացնել: Այն կապիտալիստներին և կուլակներին, վորոնք խախտում են խորհրդային որենքները, խ. իշխանությունը զատում է, բանտ են ստեղծում, աքսորում և այլն: Բայց խոր. որենքները չ'ն արգելում ասոսաբուկ առևտուրը: Կար ժամանակ մեր հեղափոխություն մեջ — 1918 — 1920 թ.թ. (այսպես կոչված՝ «ոսգմական կոմունիզմ») ժամանակ), յերբ առևտրի ազատություն չկար, յերբ մենք ուզում էինք կազմակերպված միջոցներով կարգի բերել գյուղի և քաղաքի միջև յեղած փոխանակությունը: Այն ժամանակ, ինչպես մենք բոլոր հիշում ենք, բոլոր միջոցները — արդյունաբերության և գյուղատնտեսության — բաժանում

եյին քարտերով (կարտոչկայով): Փողն ախ ժամանակ գրեթե վոչ մի արժեք չունեի: Բայց այդպիսի տնտեսավարությունը չէր համապատասխանում գյուղացիական տնտեսության պայմաններին: Մասնաշրույմը (ոսգվյորստկան) սպանում էր գյուղացու մեջ նրա տնտեսությունը զարգացնելու ձգտումը: Այս պատճառով, նույնպես իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմի պատճառով, ցանքսերի տարածությունը խիստ կրճատվեց: Գյուղացին իր տնտեսության մեջ միջոցների մի մասն (հաց, յուղ, հավիթ) արտադրում է ծախելու համար և միևնույն ժամանակ կարիք է գլում արդյունաբերության ապրանքների — չիթ, գութան, յերկաթ, շաքար և այլն: Ուստի գյուղացուն հնարավորություն: Ահա ինչու Լենինի առաջարկությամբ, 1921 թվին մասնաշրույմը (ոսգվյորստկան) փոխվեց պարենաւորքով և հաստատվեց թե հացի և թե այլ միջոցների ազատ առևտուր: Այդ այսպես կոչված՝ «նոր տնտեսական քաղաքականությունը» լիովին յիրեն արդարացրեց, յերկրի տնտեսությունը սկսեց արագ կերպով զարգանալ, ցանքսերի տարածությունը լայնացավ, վորովհետև գյուղացին շահազուրկում էր իր տնտեսության զարգացմամբ:

Ամրացավ և մեր փողի սխտեմը, փողը սկսեց կարևոր դեր խաղալ առևտրի մեջ:

Աշխատավոր գյուղացուության շահերից յիջնելով, մենք թույլ տվինք մասնավոր առևտուրը: Այս հանգամանքից ոգտվեցին մասնավոր առևտրականը, չարչին, կուլի կը, վորոնք հնարավորություն ստացան հարստանալ և գրպանները հաստացնել: Միաժամանակ մենք կարգավորում ենք առևտուրը և սահմանափակում չարչիների և կուլակների աշխատավորներին շահագործելու ախորժակը:

Առևտուրն արգելիլ մենք չենք կարող, այս բանն ամենից առաջ կզարներ գյուղացու տնտեսության: Ուստի մենք

կովում ենք մասնավոր առևտրականի և կապիտալիստի դեմ ուրիշ ճանապարհներով. մենք նրան շուկայից դուրս ենք հանում պետական և կոոպերատիվ առևտուր կազմակերպելով. Նոր տնտեսությունն այս տարիների ընթացքում մենք մեծ աջողություններ ունենք այս ասպարիզում: Վերջ ի վերջո, տարեցտարի հեռացնելով մասնավոր առևտրականին, պետական և կոոպերատիվ առևտուրը լիովին կտիրապետի շուկային:

Բայց միայն դա հերիք չի սոցիալիզմի շինարարություն համար: Շուկային տիրապետելով, մենք դեռ չենք վոչնչացնում չքավորի կախումը կուլակից, չենք վոչնչացնում տնտեսական անհավասարությունն ու մարդու կոզմից մարդուն շահագործելը:

Վորպեսզի այժմյան ՆեՊ-ի Ռուսաստանը զարձնել սոցիալիստական, հարկավոր է սիրապետել վոչ միայն առեւտրին, այլ յեւ արտադրության բոլոր հիմնական նյութերին: Լենինը նոր տնտեսական քաղաքականություն սկզբում մեզ կոչ էր անում «առեւտրը սովորել»: Յի՛թե վոչ բոլորովին, գոնե շատ բան մենք սովորել ենք արդեն այս ասպարիզում: Այժմ արտադրել պետք է սովորենք:

Արդյունաբերությունն ասպարիզում մթերքների գլխավոր մասսան (մոտ 90 տոկոս) արտադրում է խոշոր արդյունաբերությունը, վորը պատկանում է բանվորական պետության: Այդպես չե գյուղատնտեսությունն ասպարիզում: Այնտեղ մթերքների գլխավոր մասսան արտադրում են մանր առանձնացած (անհատական) գյուղացիական տնտեսությունները: Ինչ վերաբերում է պետական տնտեսություններին, (սովխոզ) և գյուղացիական համայնական տնտեսություններին (կոլխոզ), պետք է ասել, վոր նրանք դեռ շատ քիչ են արտադրում (3 տոկոսից քիչ): Կուլակային տնտեսությունը հացի արտադրության մեջ դեռ ավելի մեծ տեղ է բռնում, քան սովխոզներն ու կոլխոզները (ընդհանուր արտադրու-

թյան 13 տոկոսը): Մենք պետք է միացնենք մեր մանր գյուղացիական տնտեսությունները և զարձնենք խոշոր հասարակական տնտեսություններ—միասին հող մշակող ընկերություններ, արտելներ, կոմունաներ: Վորպեսզի վերջ տանք կապիտալիզմին գյուղատնտեսություն մեջ, մենք պետք է արագ քայլերով զարգացնենք խոշոր պետական տնտեսությունները (սովխոզները), գյուղացիական տնտեսությունների հիմնական մասի կոոպերացման ու համայնացման գործը:

Համայնական տնտեսություններ (կոլխոզներ) կազմակերպելով, գյուղացիները խոշորացնում են իրենց տնտեսությունը: Կոլխոզում ձեռնտու է գործածել գյուղատնտեսական մեքենաներ և յերկրագործությունը գիտական ձևերով տանել: Կուլակային տնտեսությունը, վորպես ավելի խոշոր և ուժեղ տնտեսություն, ավելի ձեռնտու է, քան չքավորի և միջակի տնտեսությունը: Բայց կոլխոզ կազմելով, չքավորներն ու միջակներն իրենց տնտեսությունն ավելի ձեռնտու են զարձնում, քան կուլակայինը: Մեր յերկրում արդեն գոյություն ունեն մի շարք կոլխոզներ, վորոնց բերքը մեկ ու կես անգամ ավելի է, քան գյուղացիներինը: Միևնույն ժամանակ կոլխոզներում յերկրագործի աշխատանքը թիթեւանում է այդ աշխատանքը ուղիղ դասավորելով և մեքենաներ գործածելով:

Ինարկե արորով դժվար է, նույնիսկ անկարելի է խոշոր համայնական տնտեսություն ստեղծել: Վորպեսզի կոլխոզներին շինարարությունը զարգանա, հարկավոր են մեքենաներ, տրակտորներ, քամհարներ (մոլոտիլի), հնձող ու կալսող մեքենաներ և այլն: Բայց մեր յերկիրը դեռ քիչ է արտադրում գյուղատնտեսական մեքենաներ և չի բավարարում գյուղացության աճող պահանջին: Մենք գյուղատնտեսական մեքենաների մի մասը բերում ենք արտասահմանից և միաժամանակ ուժեղացնում ենք մեր սեփական արտա-

դրությունը որինակ՝ Մտալինգրադում շինում ենք տրակտորներ, ի գործարան, Ռոստովում գյուղատնտեսական մեքենաների գործարան և այլն: Կատարյալ հիմարություն կլինեիր կարծել, թե կարելի չե ինչ վոր վարչական հրամանով միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները վերածել համայնական տնտեսությունների: Հեղափոխության սկզբում կային առանձին տաքարյուն և միևնույն ժամանակ թեթևամիտ անհատներ, վորոնք առաջարկում էին ուղղակի դուռով կազմակերպել գյուղացիներին կոմունաների մեջ Գյուղացին այս ժամանակ կլինի կոմունայի խոշոր համայնական տնտեսության կողմնակից, յերբ այդ տնտեսությունը խեղտպես ավելի ձեռնտու կլինի, քան թե նրա տնտեսությունը: Ահա թե ինչու Լենինն ահագին նշանակություն եր տալիս գյուղատնտեսության մեքենայացման: Նա ասում եր, վոր յիթե մենք կարողանանք հարյուր հազար տրակտոր գործ ածել, այն ժամանակ գյուղացին կանցնեիր «կամունի» կողմը, կղանար համայնական տնտեսությունների կողմնակից:

Ահա թե ինչու մեր տնտեսական շինարարության հիմնական խնդիրն ե կազմում արդյունաբերության բազմակողմանի զարգացումը: Առանց նրա զարգացման մենք վոչ միայն չենք կարող վոչնչացնել ապրանքների պակասությունը (ապրանքային սուր), այլ և չենք կարող բարձրացնել և վերակառուցել գյուղատնտեսությունը, չենք կարող վոչնչացնել թշվառությունը մեր գյուղում և չբավորի կախումը կուլակից: Առանց արդյունաբերության, մանավանդ խոշոր (մեքենաներ արտադրող) արդյունաբերության ուժեղ զարգացման, մեր յերկիրն առհասարակ, ինչպես ասում եր Լենինը, կխորտակվեր վորպես ինքնուրույն յերկիր: Մենք այն ժամանակ կախված կլինեինք կապիտալիստական յերկրներից, նրանց լծի տակ կընկնեինք:

61093.67


Б И К
 ИСТОРИЯ
 ВОСТОЧНОЙ АЗИИ
 Ленинский язык

Վորպեսզի բարձրացնել մեր գյուղատնտեսությունը, պետք ե ամեն կերպ զարգացնել արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք արտադրում են գյուղատնտեսական մեքենաներ, պարարտացման նյութեր: Գյուղատնտեսությունը, չնայած նրա վերջին տարիները զարգացման, այնուամենայնիվ դեռ շատ յետամնաց ե: Այս յետամնացությունը մանավանդ տեղի չե ընկնում հացահատիկների վերաբերյալ:

Գյուղացության յետամնացության գլխավոր պատճառը նրանումն ե, վոր գյուղացիական տնտեսությունները չափազանց բաժան-բաժան են յեղած—մոտավորապես 100 միլիոն հեկտար ցանքսին ընկնում ե 25 միլիոն գյուղացիական տնտեսություն: Մյուս պատճառն ել այդ տնտեսությունների ցածր տեխնիկան ե: Մի շարք շրջաններում դեռ յեռազաշտալին ձևերն են տիրապետում ու գութանի փոխարեն արորով են վարում:

Ահա թե ինչու Խորհրդային իշխանությունը կարևոր ե համարում բարձրացնել բերրիությունը և գյուղատնտեսության զարգացումը, մանավանդ հացահատիկների մշակման զարգացումը: Պետք ե մի շարք միջոցներ ձեռք առնել չբավորի ու միջակի տնտեսությունը բարձրացնելու համար, վորովհետև դեռ մի շարք տարիների ընթացքում նրանք են լինելու հացահատիկ մշակողներ: Պետք ե վարկ, սերմացու և գործիքներ տալ նրանց, մի շարք ազրոնոմիական միջոցներ անցկացնել նրանց տնտեսության մեջ, ինչպես որինակ, վաղ զարնանային վար, աշնանային վար անել, սերմերը մաքրել ու ջոկել, բազմազաշտան ձևերի անցնել և այլն, վերպեսզի բարձրացնել գյուղացիական գաշտերի բերրիությունը և միևնույն ժամանակ յերկրի հացի ապրանքների քանակը (այս տարի կառավարությունը 40 միլիոն վութ սերմացու յերբաց թողել):

Իայց միևնույն ժամանակ չի կարելի մոռանալ, վոր մանր գյուղացիական տնտեսության այդ զարգացումը կա-



րող և կատարվել՝ ավելի արագ և աջող կերպով միայն կոպերացիայի և համայնացումի միջոցով: Մենք չենք կարող հույս դնել, վոր կարող կլինենք ամեն մի առանձին թույլ տնտեսութեան յեզ կամ պակասող գործիքներ տալ: Իսկ շատ շրջաններում անձի տնտեսութեանների թիվը 33 տոկոսից ավելի չե, իսկ ինչքան տնտեսութեաններ կան, վոր գործիքներով քիչ են ապահովված: Այդ պատճառով հողը վատ ե մշակվում:

Հողի մշակման լավացումը, գործիքների ուղիղ ոգտագործելը կարելի չե միայն այն պայմաններում, յեթե առանձին գյուղացիական տնտեսութեանները միանան արտադրողական կոոպերացիայի միջոցով և կազմակերպեն մեքենայական, սերմացու պահող, կաթնատնտեսական և այլ ընկերութեաններ: Ավելի կարևոր պետք ե համարել հողի համայնական մշակելուն անցնելը: Գյուղացիական մասսաները—չքավորներն ու միջակները—ավելի և ավելի յեն ըմբռնում, վոր համայնական տնտեսութեանն ավելի ձեռնտու յե նրանց համար: Գյուղացութեանը լայն կերպով ընդառաջ գնաց կուսակցութեան կոչին, վոր արվեց կուսակցութեան տան և հինգերորդ համագումարում — «Առաջ, դեպի խոշոր համայնական տնտեսութեան»: Կան դեպքեր, յերր գյուղացիք ամբողջ գյուղերով անցնում են հողի համայնական մշակման: Սովխոզների և գյուղատնտեսական կոոպերացիայի արակտորների կալոնները լայն կերպով մշակում են ամբողջ գյուղերի հողերը: Գյուղական համայնքներն ազրոնոմիական միջոցներ են անցկացնում ընդհանուր գյուղի համար և կոնտրակտացիայի միջոցով ամբողջ գյուղով կապվում պետութեան հետ: Այժմ արդեն վոչ միայն առաջավոր գյուղացիների մանր խմբակներն, այլ ահագին գյուղացիական մասսաները զալիս են այն դիտակցութեան, վոր անհրաժեշտ ե վիշել տնտեսավարութեան հին, պապական ձևերը և անցնել նոր ձևերի—համայնացրած աշխատանքի:

տանքի: Միայն այդ միջոցով գյուղը կարող ե վերջնականապես դուրս գալ թշվառութեանից, ազատվել ընտելացան ուժեքից ստրկական կախում ունենալուց (յերաշա ե այլն), թեթևացնել իր աշխատանքը և վոչնչացնել չքավորի, միջակի և կուլակի միջև յեղած տնտեսական անհավասարութեանը: Կառավարութեանը սովխոզներին ոգնելու ժամանակ միջոցներ ե ձեռք առնում նոր սովխոզներ կազմելու: Պլանի համաձայն, 4—5 տարվա ընթացքում մենք պետք ե ստանանք շինվող նոր սովխոզներից 100 միլիոն փութ հացի ապրանք: Այդ սովխոզների կառուցումն այս տարի արդեն սկսված ե:

Կոլխոզների և սովխոզների միջոցով ուժեղանում և գյուղատնտեսութեան մեջ սոցիալիստական ձյուղը, ստեղծվում են նոր ուժեղ հիմնարկներ, վորոնք պետք ե բարձրացնեն և սոցիալիստական հողի վրա վերակառուցեն ամբողջ գյուղատնտեսութեանը: Ուստի խորհրդների վերընտրութեան ժամանակ ամեն մի գյուղացի պետք ե լավ ըմբռնի այս լողունգները:—

Ամեն կերպ աջակցել յեկրի արդյունաբերության բարձրացնելուն:

Գեպի մեքենա, դեպի ելեկտրականացում:
Առաջ, դեպի խոշոր հասարակական ֆաբրիկաներ:
Ամբողջ գյուղերով յեկեք անցնեն հողի համայնական մշակման: Համայնացումի միջոցով դուրս բերենք չավարներին կուլակի ազդեցության ֆակից:

Այս լողունգների իրագործելուն պիտի ուղղել բանվորական և գյուղացիական մասսաների, Սորհրդային իշխանութեան ու բոլոր տեղական խորհրդների ամբողջ ջանքերը: Առաջիկա ընտրութեաններին այս խնդիրների իրագործման տեսակետից պիտի մտանալ կառավարութեան ու բոլոր խորհրդների աշխատանքների ստուգման: Իհարկե հեշտ չե իրագործել այդ խնդիրները: Տեխնիկան մեր յերկրում

յիտամնաց ե, կուլտուրան նույնպես, լավ ինժեներներն և ազրոնոմները քիչ են, միջոցներ ել քիչ ունենք: Վերպեսզի այս խնդիրներն իրագործել, մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները լարում են իրենց ույժերը: Մենք պետք է չափազանց խնայող և տնտեսող լինենք:

Պետական փոխառութիւնները և խնայողական դրամաբերկները միջոցով հարկավոր ե գյուղացիները ու բանվորները խնայողութիւնները ներգրավել դեպի սոցիալիզմի շինարարութեան գործը:

Մենք դեռ շատ պակասութիւններ և թերութիւններ ունենք: Չի բավականանում չիթը, կաշին, յերկաթը, նույնիսկ հացը և այլն: Յեւ ահա այս հողի վրա առանձին ընկերներ, բանվորներից և գյուղացիներից, վոչ միայն անկուսակցական, այլ և կուսակցական, սկսում են տատանվել: «Ույժերս կհասնի՞, լավ չի՞ լինի սպասել այդպիսի խոշոր ծախսեր անել մեքենաներ շինելու, ևլեկտրականացման, սովխոզներ և կոլխոզներ շինելու համար» — այսպես ասում են մի քանիսը:

Այդ ընկերները փախչում են դժվարութիւններից, փոխանակ նրանց հաղթահարելու: Նրանք չեն հասկանում, վոր մենք չունենք և չենք ել կարող ունենալ ուրիշ ճանապարհ, վորպեսզի դուրս գանք կարիքից, վորպեսզի բարելավենք լախ բանվորական և գյուղացիական մասսաների դրութիւնը: Մենք չենք կարող առաջ չարժեքել: Մենք աշխարհիս առաջին աշխատավոր պետութիւնն ենք, առաջին սոցիալիստական հանրապետութիւնը և պետք է աշխատենք անտեսապես հասնել ու առաջ ացնել առաջավոր կապիտալիստական յերկրներից:

Այս ճանապարհով մենք գնում ենք: Տարե-ցտարի բարձրանում ե մեր յերկրի տնտեսական ույժը: Պետական խաշոր արդունաբերութեան ընդհանուր արտադրութիւնը տարե-ցտարի բուռն կերպով աճում ե: Այսպես, որինակ,

1921-22 թվին նա աճել ե 19,5 տոկոսով, 1927-28 թվին — 24,9 տոկոս. 1928-29 թվին պիտի աճի 18,8 տոկոսով: Մինչդեռ կապիտալիստական յերկրներում ամենալավ տարիներին արդունաբերութիւնն աճում ե հազիվ Յ տոկոսով: Աճում ե նաև մեր գյուղատնտեսութիւնը: Այս տարվա մեր ցանքսերի տարածութիւնը մինչպատերազմյան տարածութեան 96,6 տոկոսին ե հասել, իսկ մյուս տարի պետք է անցնի մինչպատերազմյան տարածութիւնից: Կասկած չկա, վոր մենք մոտ տարիներս դուրս կգանք դժվարութիւններից, ապրանքի սովից, գյուղատնտեսութեան յետամնացութիւնից, Լայն բանվորա-գյուղացիական մասսաների կյանքն ավելի և ավելի պիտի բարելավվի:

Ժողովրդական տնտեսութեան վերելքը սերտ կերպով պիտի կապվի կուլտուրական աշխատանքի ետ: Անխնդ մեզ պատգամ ե թողի, վոր պետք է առաջ տանել «կուլտուրական հեղափոխութիւնը»: Մեր յերկրում դեռ շատ անգրագետներ կան, — քաղաքում 27 տոկոս, իսկ գյուղում — 58 տոկոս: Մենք ունենք այնպիսի անկուսներ, ուր գրագետների թիվը հասնում ե միայն մի քանի տոկոսի. որինակ՝ Հյուս. Կովկասում, ինգուշների շրջանում յուրաքանչյուր հարյուրից միայն 4 հոգի յեն գրագետ, իսկ կանայք գրեթե բոլորն ել անգրագետ են: Մեր յերկրում դեռ կենդանի յե դարերի անշարժութիւնն ու յետամնացութիւնը, յրագիր չեն կարողում, զանազան քաղաքական ասե կոսներով են կերակրվում, հավատում են տերտերներին, յենթարկվում են արբեցողութեան և այլն: Գյուղացու կյանքը դեռ պատած ե մթութեամբ, խավարով, հիվանդութիւններով: Ավելի վատ ե գեղջկուհու գրութիւնը:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը ցնցեց նաև գյուղական կենցաղը: Լրագիրը հասել ե գյուղերի խուլ անկուսները, ուր առաջ յերբեք յրագիր չիլին կարողում: Գյուղ են անցնում կիսոն, ուղիտն: Գյուղ են գնում կուսակցականները,

ուսուցիչները, աղբոսները, Իրեն, գյուղի մեջ բարձրանում են ակտիվ խավերը—կոոպերացիայի, խորհրդների աշխատավորների, գյուղական թղթակիցները: Այժմ արդեն շատ գյուղացիք մտածում են վոչ միայն իրենց խրճիթի, իրենց տնտեսութայն մասին, այլ և իրենց ամբողջ գյուղի, գավառի մասին:

Կինը դեռ ընկճված է, բայց քանի՜ քանի որինակներ կան արդեն, յերբ գեղջկուհին տղամարդու հետ հավասար վորոշում է իր գյուղի, շրջանի, նույնիկ նահանգի գործերը: Խորհրդային իշխանությունը մի փոքր գութան չէ, այլ մի տրակտորային գութան, վորը խոր ակոսներով փորում հերկում է կույս հողի կուրծքը:

Յերկիրը տեղից շարժվել է, ահադին կուլտուրական նվաճումներ է անում: Բայց մենք սոցիալիստական շինարարութայն այս դարաշրջանում պետք է ուժեղ կերպով զարկենք մեր կուլտուրական լետամնացութայն, անշարժութայն, այն բոլորին, ինչ վոր խանգարում է ժողովրդական մասսաների ստեղծագործական աշխատանքի զարգացման: Այժմ շատ շրջաններում կուլտուրական արշավանք են սկսել մեր կուսակցականները, կոմյերիտականները, մեր ամբողջ խորհրդային հասարակայնությունն անգրագիտութայն դեմ: Այժմ հեղափոխութայն 14-րդ տարում պետք է վճռականորեն և արագ կերպով արմատախիլ անել այդ դարավոր շարիքը—անգրագիտությունը: Յուրաքանչյուր զբաղեցրած թող մի անգրագետ սովորեցնեն:

Պետք է կարգի բերել լիկկայանները, խրճիթ-ընթերցարանները, պետք է ամեն միջոց ձեռք առնել դպրոցների ցանցը լայնացնելու համար: Պետք է, վոր վոչ միայն ուսուցիչն ու խրճիթվարը զբաղվեն կուլտուրական աշխատանքով, այլ և ամբողջ խորհուրդը պետք է ուղղորդութուն դարձնի այս գործին, պետք է, վոր ամբողջ խորհրդային հասարակայնությունը—ջանել ու ձեռ—մասնակցի կուլտուրական հեղա-

փոխութայն մեծ գործին: Պետք է ստուգել խորհրդների ընտրությունների ժամանակ մեր դպրոցների, խրճիթ ընթերցարանների, լիկկայանների աշխատանքը: Հանձնարարիք ձեռ պատգամավորներին և ցույց տվեք գործնական միջոցներ, թե ի՞նչպես ուժեղացնել անգրագիտութայն վերացումը, ինչպես հաղթահարել ցարիզմից մնացած դարավոր այդ չարիքը, միլիոնավոր գեղջուհիների և գեղջկուհիների խավարամտությունը և լայնացնել կուլտուրական աշխատանքը—ահա տյն հիմնական խնդիրները, վորոնք պետք է աչքի առաջ ունենալ խորհրդների ընտրությունների ժամանակ:

„ԻՆՉՈՒՒ ԻՆՁ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՁԵՆ ՏԱԼԻՍ“

— Ինչո՞ւ յեն ինձ զրկում ընտրողական իրավունքից: Լավ, ասենք թե նախկին կապիտալիստներին և կալվածատերերին ընտրողական իրավունք չեն տալիս: դա հասկանալի յե: Յես հասկանում եմ, թե ինչու նախկին ժանդարմներին, սպիտակ սպաներին զրկում են իրավունքից: Ապա ի՞նձ, ազնիվ վաճառականիս, լավ տնտեսիս, ի՞նձ ինչու յեն զրկում: Ախր ամենից շատ խորհրդային իշխանությունն ինձ է հարկերով սեղմում, իսկ իրավունք, վոչ մի իրավունք չի տալիս: Իմ բատրակը, իմ ծառան, կարելի յե ասել վոչ մի կայք չունի, իսկ իրավունք ինձնից շատ ունի: Ձե՞ վոր յեթե յես չըլի՛նի, նա պետք է քաղցած մասն գար: Յեվ ահա, տե՛ս, նա ամենից առաջ է գնում ընտրություններին: Շատ կարելի յե, վոր մինչև անգամ նորան ընտրեն ել, իսկ ինձ, ինձ մինչև անգամ չեն թողնում, վոր գոնե հաշվետվութայն ժողով զընամ: Եսպես բա՞ն կլինի:

Այսպես են ասում չարչիներն ու կուլակները: Յեվ իսկպպես, նրանց ձայն չեն տալիս: Նրանց տեսակետից դա անարդար է, իսկ աշխատավորի տեսակետից—արդար է և ուղիղ: Կուլակ-

ներն ու առևտրականները մեր թշնամիներն են: Իսկ ինչո՞ւ մենք իրավունք պետք է տանք մեր թշնամիներին:

— Թող միայն ինձ իրավունք տան, — մտածում է կուլակը կամ չարչին. — այն ժամանակ հեշտ է խորհուրդ անցնել: Այս ընտրութիւններին չլինի, մյուսին կանցնեմ: Մեկին վարկով փող կտամ, մյուսին ապառիկ ապրանք կտամ, յերրորդին կհյուրասիրեմ և այլն: Իսկ հետո բոլորին ել նեղ տեղը կգցեմ: Ձայն տուր ինձ, կամ իսկույն պարտք տուր:

Վոչ նոր և վոչ ել հին բուրժուաներին մենք ձայնի իրավունք չենք տա: Իշխանութիւնը մեր յերկրում աշխատավորներինն է և տալ այդ իշխանութիւնը կուլակներին մենք մտադիր չենք:

Բացի կուլակներից, կալվածատերերից և կապիտալիստներից, Սորհրդային իշխանութիւնը զրկում է ընտրողական իրավունքից նաև բոլոր սղղիւրի հողւորականներին:

Սրա՞նց ինչու: Չե՞ վոր նրանք աշխատում են, աղօթք են անում, հողհանգիստ կատարում:

Հողւորականներին զրկում են ընտրողական իրավունքից այն պատճառով, վորովհետև նրանք վոչ մի արժեք չեն ստեղծում և նրանց աշխատանքն արտադրողական չէ:

Յեկեղեցին բաժանված է պետութիւնից: Սորհրդային իշխանութիւնը չի միջամտում յեկեղեցական գործերին: Հողւորականների աշխատանքը նրա համար անոգուտ է, ուստի համարվում է անարտադրողական, իսկ իրենք, հողւորականները ձրիակիր:

Ընտրողական իրավունք չունեն նաև նախկին սպիտակ սպաները և զինվորականները: Ձայնից զրկվում են բացի գրանցից նույնպես նախկին վաստիկանները, ժանգարանները և այն հակահեղափոխական բանդաների ղեկավարները, վորոնք կովել են Սորհրդային իշխանութիւն, դեմ նրա ծանր որբերին:

Կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը ձեռք են առնում ամեն մի միջոց, վորպեսզի ձայնազուրկները վոչ մի կերպ խորհուրդ չանցնեն: Պետք է ուշադրութեամբ հետեւել, վորպեսզի վոչ մի կուլակ, վոչ մի ձրիակիր, վոչ մի առևտրական ընտրողական իրավունք չստանա: Բայց միևնույն ժամանակ չպետք է սխալվել և ձայնից զրկել վորեւէ միջակի և առհասարակ, աշխատավորի:

Ո՞ՒՄ ԸՆՏՐԵԼ

Բայց ամենից կարևորն ընտրութիւնների ժամանակ հենց իրենք, ընտրութիւններն են:

Ամեն մի ընտրող իրեն հարց է տալիս. ո՞ւմ ընտրել: Այն հակահեղափոխականներն ու կուլակները, վորոնք չեն կարողանում անցնել վոչ միայն խորհուրդ, այլ և նախընտրական ժողով, սկսում են ագիտացիա տանել կուսակցութեան ղեկավարութեան դեմ:

Շատ անգամ գյուղում կարելի չէ այսպիսի բան տեսնել. գյուղացին գնում է ընտրողական ժողով: Յերբ նա անցնում է խանութի մոտով, դռան մեջ յերևում է հաստափոր չարչին:

— Ո՞ւր ես գնում:

— Գյուղխորհուրդ, ընտրութիւններին:

— Ընտրել ո՞ւմ: Հա՛, հա՛, հա՛: Այնտեղ առանց քեզ արդին ընտրել են: Կոմունիստներն իրենք ամեն բան արգեն վորոշել են, ցուցակ են կազմել, իսկ ձեզ, տխմարներդ, հրավիրում են ձայն տալու:

Այսպիսի խոսակցութիւններով կուլակներն աշխատում են գյուղացիներին խոսկեցնել կուսակցութեան դեմ: Նրանք յերազում են ամեն բանի մասին, ինչի մասին յերազել են կապիտալիստներ, յերբ նրանք յոգուեց դուրս բերին՝ «Լեյցե՛ն խոհրդները, կորչե՛ն կոմունիստները»:

կուսակցութիւնը բանվոր դասակարգի առաջավոր և գիտակից մասն է և նա չի կարող հրաժարուիլ ղեկավարութիւնից, վորովհետև այդ կնշանակեր աշխատավորների իշխանութիւն կորուստը:

Այս բանը շատ լավ գիտենք բոլոր բանվորները և գյուղացութիւն մեծամասնութիւնը:

Կոմունիստները, վորպէս առաջավոր մարդիկ, ընտրողների քննութիւն են դնում, թե ում պետք է ընտրել խորհրդի անդամ: Բռնադատուի ուրիշի կամքը կոմունիստները իրավունք չունեն: Յեթե նրանք այդպէս վարվեն, նրանք կուսակցութիւն դեմ գնացած կլինեն, բայց զնիլ իրենց կարծիքը ժողովի քննութիւն նրանք պարտավոր են, այլպպէս նրանք չեն արդարացնի աշխատավորների ղեկավարների դերը:

Կուսակցական բջիջը մտցնում է իր թեկնածուներին. ամեն մի ընտրող իրավունք ունի մտցնել իր թեկնածուներին: Նախագահը պարտավոր է քվեարկութիւն ղնել յուրաքանչյուր թեկնածուի առանձին. ով շատ ձայն ստանա, նա կընտրվի:

Ռ. Բեմն ո՞ւմ ընտրել խորհրդի անդամ:

Կուսակցութիւնը չի ձգտում, վոր խորհրդի անդամ ընտրվեն վորքան կարելի յի շատ կոմունիստներ: Ընդհակառակը, կուսակցութիւնն աշխատում է, վորպիսպի խորհրդի մեջ վորքան կարելի յի շատ անկուսակցական բանվոր ու գյուղացի լինի: Այդ չի նշանակում, վոր խորհրդներ լինի մեջ կոմունիստներ չպետք լինեն: Յեթե խորհրդի մեջ կոմունիստներ չլինեն, այն ժամանակ ղեկավարութիւն էլ չի լինի, իսկ մենք գիտենք, վոր բուրժուաները հենց այդ են ուզում:

Ամենից առաջ խորհրդի մեջ տեղ պետք է գտնեն գործունյա և ակտիվ անկուսակցական բանվորները:

Գյուղում խորհրդների մեջ պետք է գրավել վորքան

կարելի յի շատ ակտիվ բաւորակների ու չքավորների: Բայց մեծ սխալ կլինի, յեթե խորհրդներ մեջ սահմանափակելինք միջակների թիվը:

Չքավորներն ու բաւորակները պետք է ընտրութիւնների ժամանակ ամուր կապ ունենան միջակների հետ: Գյուղում միջակները մեծամասնութիւն են կազմում, ուստի նրանք խորհրդի մեջ պետք է լինեն բավականին թվով: Հակառակ դեպքում մենք վոչ թե ամրացրած, այլ թուլացրած կլինենք կապը միջակի հետ:

Կուսակցութիւնը պահանջում է ամրացնել միջակների հետ յեղած կապը և խորհրդների վերընտրութիւնների ժամանակ այդ կապն ավելի ևս պիտի ամրանա:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒՎԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ԱՄՐԱՊՆԴԵԼ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՑ.ՈՒԹՅԱՆ ՀԵՏ, ԿՈՒՎԸ ԴԵՄ:

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԼԻՈՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՈՐԻՆԱՎԱՆՈՒԹՅՈՆ ՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԶՔԱՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ:

ԶՏԵԼ ԽՈՐՀՐԿԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՍԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՄԵՋ ԱՆՅԿԱՑՆԵԼ ԲԱՏՐԱԿՆԵՐԻ, ԶՔԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՄԻՋԱԿՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ:

ԱՐԹՈՒՆ ԼԻՆԵԼ ՈՏԱՐՅԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԻԱՏՆԵՐԻ ԹՇՆԱՄԱԿԱՆ ՎՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ:

Ինչպես սկզբում ասել ենք, չնայած, վոր մեր յերկրում կապիտալիզմի մեջքը կոտորված է, բայց նրա արմատները դեռ մնացել են: Գյուղում ՆԵՊ ի շնորհիվ տեղի յե ունենում շերտավորում: Գյուղացիական տնտեսութունների ընդհանուր մասսայից առանձնանում է կուլակային մասը: Բայց մեր յերկրում այդ շերտավորումը պրոլետարիատի դիկտատուրայի և հողերի ազգայնացման շնորհիվ զարգանում է այլ կերպ, քան կապիտալիստական յերկրներում: Յ.թ.թ աշխատող գյուղացիական լայն մասսաները դառնում են չքավոր, մեղմում ընդհակառակը, հիմնական չքավոր— գյուղացիական շերտերն ամրանում են: Պորհրդային իշխանութունը գյուղատնտեսական հարկից ազատում է չքա-

վորների տնտեսութունները, վորոնք կազմում են բոլոր տնտեսութունների 35 տոկոսը: Նույն տնտեսութուններն ոգնութուն են ստանում պիտութունից և կոոպերացիայից, ուստի աղքատ տնտեսութուններից շատերը դառնում են միջակ: Միջակը մեղմում չի չալվում, գյուղացության միջին շերտը մեղմում չի պակասում քանակով, ինչպես այդ տեղի յե ունենում կապիտալիստական յերկրներում,— այլ աճում է: Միջակը յեղել է յեվ մնում է յերկրագործության կենտրոնական դեմք: Կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքական խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի ամրացնել պրոլետարիատի յեվ գյուղական չքավորության միությունը միջակ գյուղացության հետ, ընդդեմ կուլակի: Յերբ վոր մենք ուժեղացնում ենք մեր աշխատանքը յերկրի սոցիալիստական վերափոխման ասպարիզում, դա միևնույն ժամանակ նշանակում է, վոր մենք ուժեղացնում ենք մեր հարձակումը մեր սենսուրյան մեջ գտնվող կապիտալիստական — կուլակային տարրերի դեմ: Կուլակի տնտեսության վրա խոշոր հարկեր նշանակելով, կապալով վերցվող հողի քանակը սահմանափակելով, մենք սանձահարում ենք կուլակի շահագործման ձգտումը: Բայց այդ միջոցներով մենք չենք վոչնչացնում կապիտալիստական շերտերի գոյութունը գյուղում: Սխալ կլիներ աշխատել կուլակներին սանձահարել ուրիշ միջոցներով, որինակ, իլիկ կուլակային տնտեսութուններից նրանց գործիքները և բաժանել չքավոր տնտեսութունների միջև, կամ կուլակային տնտեսութունների վրա աշխատի հարկ դնել, վորը վերջ ի վերջո քայքայեր այդ տնտեսութունները: Այդպիսով մենք մասամբ քայքայած կլինեյինք մեր յերկրի գյուղատնտեսութունը, վորովհետև մենք վոչ միայն կվոչնչացնեյինք կուլակների տնտեսութունները, այլ և ուժեղ միջակների մեջ վախ կտարածեյինք իրենց անհատական տնտեսութունը զարգացնելու հանդեպ: Ահա թե ինչու կուսակցութունն ու Պորհրդային

իշխանութիւնը, շարունակելով հարձակումը կուլակի վրա, միևնույն ժամանակ դեմ են կուլակներին տնտեսութիւններին վերջնական քայքայման:

Սահմանափակելով խորհրդային որենքներով կուլակների շահագործման ցանկութիւնը, մենք միևնույն ժամանակ աշխատում ենք համայնացման ու կոոպերացիայի միջոցով զարգացնել կուլակների դեմ ուղղված սոցիալիստական հարձակումը: Մենք պետք է ուղիղ կերպով կազմակերպենք վարկի բաժանումը չքավոր ու միջակ տնտեսութիւններին, վորպեսզի կարողանանք բարձրացնել նրանց: Մենք պետք է աջակցենք նրանց արտադրողական կոոպերացման, կոլխոզների միջ միանալուն: Մենք պետք է մեքենաներ տանք գյուղացիական տնտեսութիւններին, վորպեսզի կարողանանք նրանցից խոշոր տնտեսութիւններ կազմակերպել: Սովխոզներն ու կոլխոզները չքավոր ու միջակ տնտեսութիւնները բարձրացնելու և միացնելու գործում պիտի դառնան գործնական օրինակներ: Գնալով այս ճանապարհով, մենք իսկապես դուրս կբերենք չքավորներին կուլակի տնտեսական ազդեցութեան տակից: Գնալով այս ճանապարհով, մենք իսկապես շահագործումն և կապիտալիզմն արմատախիլ ենք անում: Գյուղատնտեսութիւնը սոցիալիստականի վերակառուցելով, մենք մահացու կերպով հարվածում ենք կուլակին ու կապիտալիզմին: Յեւ կուլակը զգում է, վոր կուլակցութեան 15-րդ համագումարի վորոշումները սպառնում են վոչնչացնել նրան, դրա համար ելնա կատարի կերպով դիմագրում է, պայքար է մղում խորհրդային իշխանութեան դեմ, վորովհետև մեր գյուղատնտեսութիւնը սոցիալիստականի վերափոխելու զարգացող աշխատանքը խախտում է նրա շահերը: Յեւ այդ սոցիալիստական վերակառուցումն աստիճանաբար պետք է ավելի

և ավելի թուլացնի բնակչութեան բուրժուական և կուլակային շերտերին:

Վերջ ի վերջո սոցիալիստական շինարարութիւնը նշանակում է դասակարգերի վայնչացում: Տնտեսութեան մեջ կապիտալիստական տարրերի վոչնչացում: Վերջ ի վերջո սոցիալիստական խորհրդային հանրապետութիւններին բանվորներն ու գյուղացիները պիտի դառնան սոցիալիստական հասարակութեան ազատ աշխատավորներ: Բայց հիմա դասակարգային կռիվը սովում է, մանավանդ գյուղում: Կուլակները, հենվելով աշխատավոր գյուղացիների անգիտակից մասսաների վրա, ձգտում են պայքարել խորհրդային իշխանութեան դեմ, ձգտում են խանգարել բանվորական պետութեան տնտեսական պլանների իրագործումը: Հիշեցեք անցյալ տարվա հացամթերման դժվարութիւնները: Այն ժամանակ կուլակները հաց չէին ծախում, աշխատում էին բարձրացնել հացի գներն ի վնաս չքավոր գյուղացութեան: Նրանք ապիտացիա յեյին մղում գյուղացութեան մեջ, պետութեան հաց չծախելու: Կուլակներին դեմ պետութիւնը դործ դրից 107 րդ հոդվածը: Այդ հոդվածն ուղղված է կուլակների, չար մտքով հաց պահողների դեմ: Բայց գործնականում մի շարք սխալներ են տեղի ունեցել, մի շարք վարչական կամոյականութիւններ, յերբ 107 րդ հոդվածը գործադրում էին վոչ միայն կուլակի դեմ, այլ և միջակի և յերբեմն ել չքավորի դեմ: Այս արտակարգ միջոցների շնորհիվ հնարավոր յեղավ սովից փրկել սպառող նահանգների բանվորներին և գյուղացիներին:

Իսկ յերբ արտակարգ միջոցներին դիմելու կարիքն անցավ, կատավորութիւնը հրաժարվեց նրանցից և միաժամանակ ընդառաջ դնաց միջակ գյուղացութեան, ավելացնելով հացի գները:

Անցյալ տարվա հացամթերման ժամանակ կուլակի դիմադրութունը հաղթահարվեց: Բայց այդ դեռ չի նշանակում, վոր կուլակը սոցիալիստական հարձակման դեմ չպիտի պայքարի: Ամեն մի քայլափոխում մենք հանդիպում ենք կուլակի՝ Խորհրդային իշխանության դեմ, սոցիալիստական շինարարության դեմ ուղղած պայքարին:

Քանի գնում, հանախանում են դեպքերը, յերբ կուլակները յեվ նրանց կողմնակիցները ձգտում են ուղղակի վնասակցել համայնական օճեցությունները: Քանի գնում, շատանում են կուլսոգները, սովխոգները հրդեհելու դեպքերը, հրդեհում են շենքերը, վառում են հացը, փչացնում են կուլսոգների մեքենաները, հարձակվում են կուլսոգների գյուղացիների վրա: Այսպիսի դեպքեր տեղի յին ունեցել յերկրի զանազան ծայրերում և անկյուններում—Սիրիում, Ուկրաինայում, Հյուսիսային Կովկասում և ուրիշ տեղերում: Կուլակները կոխի են մղում խորհրդների և կոոպերացիայի մեջ իրենց ազդեցութունը պահպանելու համար: Շատ շրջաններում գյուղխորհրդներում նստոտել են կուլակային և առհասարակ, հակախորհրդային տարրեր: Այդպիսի դեպքերում ել ինչպե՞ս կարող են խորհրդները կոխի մղել կուլակների դեմ:

Կուլակը պայքարի բնրացում գործ է ածում ամեն մի միջոց. նա գործում է կաշառեալ, օղիով, դանակով յեվ այլ միջոցներով: Տերտերներ յեվ առհասարակ հոգեվորակները կուլակների ակտիվ կողմնակիցներն են: Յեկեղեցու սեղանից նրանք յիրքեմն քարոզ են կարգում խորհրդային իշխանության, կուսակցության ու կոմյերիտների դեմ: Նրանք ասում են, վոր բոլոր մարդիկ հավասար են աստուծու առաջ և սիա ժամանակ կատաղի կոխի են մղում սոցիալիզմի դեմ, յերկրիս վրա իսկական սոցիալական հավասարութունն հաստատելու դեմ:

Գյուղացության մեջ դեռ շատ կրոնական անապաշտութուններ կան և կուլակներն աշխատում են ոգտագործել ժողովրդի այդ սղխտութունը, վորպեսզի պղտոր ջրի մեջ

ձուկ վորսան, կեղեքեն չքավորությանը, «յետ, դեպի կապիտալիզմը» դարձնեն զարգացման գիծ:

Այժմ, յերբ տեղի յին ունենում խորհրդների ընտրութունների նախապատրաստական աշխատանքները, կուլակներն ամեն կերպ աշխատում են խորհրդի մեջ անցկացնել իրենց մարդկանց: Տեղերից հայտնում են, վոր կուլակները գաղտնի ժողովներ են կազմում ու այդ ժողովներում իրենց անելիքների մասին խոսում:

Մենք վերընտրողական պայքարից հաղթող դուրս կը գանք միայն այն ժամանակ, յերբ կկազմակերպենք չքավորներին ու բատրակներին և կամրացնենք նրանց կապը միջակների հետ: Բատրակները պրոլետարիատի գյուղական վաշտն են կազմում: Հարկավոր է բատրակների մեջ աշխատանքներն ուժեղացնել: Պետք է վաղորոք պատրաստել թեկնածուների ցուցակներ, ամենաակտիվ և խորհրդային իշխանության նվիրված բատրակներից, չքավորներից, միջակներից և այդ ցուցակի համար ազիտացիա տանել գյուղացիական մասսաների մեջ, կուլակների ագիտացիայի դեմ:

Շատ տեղերից լուրեր են գալիս, վոր չքավորության ակտիվութունը կուլակների դեմ ուժեղացել է: «Ազդատներն աշխարհիս տերն են դառել, ել հալ չկա նրանցից, դանակը վուկորին է հասել»—գանգատվում են կուլակները:

Այդ այնտեղ, վորտեղ չքավորութունը կազմակերպված է, վորտեղ նրա դաշինքն ուժեղ է միջակի հետ, այնտեղ լրբացած կուլակը մեզ համար վտանգավոր չի: Գյուղում սոցիալիզմի համար հզոր բանակ է աճում: Քանի գընում, քաղաքական կյանքի մեջ է մտնում աշխատավորների ամենայնտամնաց ճիտը—գեղջուկ կինը: Աճել է խորհրդի շուրջը չքավորների և միջակների ակտիվը: Աճել է ուժեղացել են գյուղի կուսակցական և կոմյերիտական կազմակերպութունները:

Կուսակցութիւն, կոմյերիտ, չքավորների գրուպպաները և կանանց ակտիվը—անա այն հզոր ուժեր, վորը կհաղթահարեն կուլակների դիմադրութիւնը և դշուղը վստահորեն առաջ, դեպի սոցիալիզմ կմղին:

Հերիք չեմ, վոր մեր դեմ վեր ե կացիլ կուլակը: Մենք տեսնում ենք, վոր Անգլիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռուսիայի և այլ կապիտալիստական յերկրների բուրժուազիան վախենալով մեր հզորութեան աճումից, տեսնոտ կերպով ռազմական ողակ ե պատրաստում մեր դեմ:

Մենք պետք ե աշալուրջ լինենք, ամրացնենք բանվորագյուղացիական Կարմիր բանակը և յերկրի պաշտպանութեանը գործը:

Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք, ինչպես մեր թշնամիների թիկունքում աճում ե բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը, ինչպես Արևելքի ճնշված ժողովրդները կովի յեն բարձրանում իմպերիալիստների դեմ:

Մենք մենակ չենք: Մեզ ոգնութեան են գալիս սոցիալիզմի համար պայքարողների նոր, հեղափոխական շարքեր: Աճում են համաշխարհային հեղափոխութեան ուժերը:

Խորհրդների ընտրութիւնները պետք ե բարձրացնեն մեր յերկրի բանվոր և գյուղացի մասսաների ակտիվութիւնն ու գիտակցութիւնը:

Խորհրդների վերընտրութիւնները կհայտնաբերեն գյուղի զանազան շերտերի ընդհարումը—բառարկների, չքավորների և միջակների մեկ կողմից ու կուլակների և հարուստների—մյուս կողմից:

Խորհրդների վերընտրութիւնների ժամանակ պարզ կերպով կհայտնաբերվի նաև դասակարգային պայքարի ազիտի սուր կերպարանք ստանալը մեր գյուղում: Այդ դասակարգային պայքարը, վոր սոցիալիզմի համար մղվող ընդհանուր պայքարի մի մասն ե գյուղում, մղվում ե մեր

յերկրում դեռ մնացած կապիտալիզմի մնացորդների դեմ, այդ մնացորդները արմատախիլ անելու համար: Կասկած չկա, վոր այս ընտրութիւններին ևս, ինչպես և առաջ, հաղթողը լինելու յե բանվոր դասակարգը և չքավոր գյուղացութիւնը միջակի հետ ձեռք ձեռքի տված: Առաջիկա վերընտրութիւնները մի նոր քայլ են դեպի սոցիալիզմ:

Բոլոր աշխատավորներ, դեպի խորհրդների ընտրութիւնները:

Ուժգին դիմադրութիւն կուլակներին և նրանց կողմնակիցներին:

Առաջ, դեպի սոցիալիզմ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0206475

807

~~84~~

35.623

17

WDL

MD

||